

Շոգովուրդ

112
(2962)

27 օգոստոսի երեքշաբթի 2024
տպագրության ԺԳ տարի

Է. Երեւան, Արմավյան 22ա/3 (0010)

+ 374 10 546423

info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

100 դրամ

«ՄԵՐ ԺԱՄԱՆԱԿՆԵՐԻ ՀԵՐՈՍԸ» ԿԱՐԺԵՆԱ 150 ՄԼՆ ԳՐԱՄ



2019 թվականից սկսած՝ «Մեր ժամանակների հերոսը» մրցանակաբաշխությունը անցկացվում էր ՀՀ անկախության տոնին՝ սեպտեմբերի 21-ին: Միջոցառման շրջանակում համանուն հաղորդաշարի հերոսները պարգևատրվում էին Հայաստանի Հանրապետության և Արցախի Հանրապետության բարձրաստիճան պետական այլերի, մշակութային գործիչների, մարզիկների, հասարակական գործիչների կողմից:

2020 թվականին, ցավոք, այն վերջին անգամ նշվեց սեպտեմբերի 21-ին՝ ՀՀ անկախության օրը: 2022 և 2023 թվականներին միջոցառումը կայացել է դեկտեմբերի վերջին օրերին:

Այս տարի ՀՀ վարչապետի աշխատակազմի և «Ֆակտորի Փրոդաքշն» ՍՊԸ-ի միջև կնքվել է միջոցառումների կազմակերպման ծառայությունների պայմանագիր, որը արժեքով է 150 մլն դրամ: Այսինքն՝ մոտ 390 հազար ԱՄՆ դոլար կծախսվի պետությունից «Մեր ժամանակների հերոսը» մրցանակաբաշխության կազմակերպման ծառայություններն իրականացնելու համար: Պայմանագիրը կնքվել է հուլիսի 1-ին բաց մրցույթի ընթացակարգով:

Միջոցառումն անցկացվելու է Կարեն Դեմիրճյանի անվան մարզահամերգային համալիրում, տեղի է 2 ժամ և նախատեսված է լինելու: 1200 անձի համար:

Միջոցառման ընթացքում բեմադրության ժամանակ բեմի վրա կհայտնվի Անահիտ աստվածուհու հանրահայտ բրոնզե կիսանդրու խոշոր նմանակը, որը, ըստ պայմանագրի, կծառայի որպես անկախության 150-ամյա միջոցառման պրոեկցիոն համակարգի համար:

Կարեն Դեմիրճյանի անվան մարզահամերգային համալիրի տարածքի ձեւավորման համար տրամադրվել է 2,5 մլն դրամ, նախաձեռնողի կազմակերպման համար՝ 4,2 մլն դրամ, նախաստիճանի կազմակերպման համար տրամադրվել է 6 մլն 650 հազ. դրամ: 1200 անձի հյուրասիրության արժեքը կազմելու է 6 մլն դրամ:

Միջոցառման շրջանակում նախատեսվում է 2 հաղորդավարներից յուրաքանչյուրին հատկացնել 2 մլն դրամ: Կարեն Դեմիրճյանի անվան մարզահամերգային համալիրի վարձակալությունը կարժեհա 5 մլն դրամ:

Միջոցառումը նկարահանվելու է «Հանրային» հեռուստաընկերության կողմից և ցուցադրվելու է 2025 թվականի հունվարի 1-ին: Ամբողջական տեխնիկական հագեցվածությունը կարժեհա 25,6 մլն դրամ:

Հայաստանի ձեռքից անկախությունը խլող իշխանություններն անգամ սեպտեմբերի 21-ին որեւէ միջոցառում կազմակերպելու մտադրություն չունեն: Հենց այս պատճառով 44-օրյա պատերազմից հետո Արդրեզյանի Հայաստանի անկախության սպառնալիքների մասին հոխորտանքներից հետո Նիկոլ Փաշինյանի նախաձեռնած միջոցառման արդեն ավանդական դարձած օրը տեղափոխվեց տարեվերջ. այն Նիկոլ Փաշինյանի, ով հեղափոխական էր և ՀՀ արժեքների ու գոյության հիմքը համարում էր անկախությունը և ժողովրդավարությունը, սակայն ժամանակը ցույց տվեց, որ հենց նա ՀՀ բոլոր արժեքները դրեց հարցականի տակ:

Շարունակությունը՝ ArmLur.am կայքում:

Վարչապետ Նիկոլ Փաշինյանի օգնական Կարինե Դավոյանը պաշտոնին նշանակվել է 2023 թվականի հունվարի 23-ից, սակայն մինչև տվյալ նշանակումը Դավոյանը 1993-1994 թվականներին եղել է Fund for Democracy and Development U.S.A. ժողովրդավարության և զարգացման հիմնադրամի Երեւանի գրասենյակի՝ ամերիկյան կառավարության հունանիտար աջակցության շրջանակում իրականացված Winter-Warmth ծրագրի ավագ թարգմանիչ, այնուհետև՝ 1994-1995 թվականներին աշխատել է TRADEMCO LTD Հունաստանի խորհրդատվական կազմակերպությունում՝ որպես ԵՄ TACIS ծրագրի Governmental Advice to the Railway Department and Management Training, Armenia ծրագրի հայաստանյան համակարգող, թարգմանիչ. ծրագրի շրջանակում երկու ամիս աշխատել է Աթենքի գրասենյակում: 1993-1995 թվականների զբաղեցրել է Olympia, Inc. (U.S.A.)-ի, Հայաստանի ներկայացուցչության տնօրենի պաշտոնը: Նույն 1995-ից մինչև 1997 թվականները Դավոյանը ՀՀ-ում Հունաստանի դեսպանի թարգմանիչն է եղել: 2001-ից 2008 թվականներին նա նաև զբաղվել է դասավանդմամբ. Մոսկվայի պետական տորիզմի և սերվիսի համալսարանի Երեւանի մասնաճյուղի ավագ դասախոս է եղել, դասավանդել է անգլերեն, «Մարդու պահանջմունքներ և կապ հասարակայնության հետ» (PR) առարկաները: Կարինե Դավոյանը 2013-2018 թվականներին եղել է Հայաստանի ներգնա տուր օպերատորների միության գործադիր տնօրեն, այնուհետև՝ 2018-2019 թվականներին Հայաստանի տուր օպերատորների և տուր գործակալների ասոցիացիայի հիմնադիր, իսկ 2019-ից մինչև 2023 թվականները՝ «Ալիք մեդիա Հայաստան»-ի միջազգային լուրերի թարգմանիչ: Վարչապետի օգնականը իր անշարժ գույքի, եկամուտների, ծախսերի և շահերի մասին հայտարարագիրը ներկայացրել է 2024 թվականի ապրիլի 25-ին, որից տեղեկանում ենք, որ նա հաշվետու տարվա սկզբում Երեւանում հայտարարագրել է բնակարան բազմաբնակարան շենքում, որը եղել է ժառանգություն 2015 թվականից: Հաշվետու տարվա վերջում անշարժ գույքը պահպանվել է: Դավոյանը տրանսպորտային միջոց չի հայտարարագրել: Նրա բանկային հաշիվների մնացորդը հաշվետու տարվա սկզբում գրական վիճակում է եղել, սակայն հաշվետու տարվա վերջում դարձել է 1 մլն 427 հազար դրամ:



Մանրամասները՝ ArmLur.am կայքում:

Արցախի անվտանգության խորհրդի նախկին քարտուղար Սամվել Բաբայանի քաղաքական փորձակը կրկին բացվել է. Հայաստանում նա ակտիվորեն պատրաստվում է խորհրդարանական ընտրություններին: «Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ վերջինս Արցախի պատգամավորներին առաջարկել է ստեղծել հատուկ կոմիտե և ոչ բաց տեքստով ակնարկել է, որ իրեն է պատկերացնում այդ նորաստեղծ կոմիտեի նախագահի պաշտոնում: Սամվել Բաբայանը արցախյան պաշտոնյաներին ու քաղաքացիներին առաջարկել է համախմբվել իր շուրջ և մեկ ճակատով հանդես գալ 2026-ին սպասվող հերթական կամ արտահերթ ընտրությունների ժամանակ: Նա նաև հավաստիացրել է, թե ինքը գիտի բոլոր խնդիրների լուծումները, և իր շուրջ կոնսոլիդացիայի դեպքում կարող է շատ հարցեր լուծել: Այլ կերպ ասած՝ Սամվել Բաբայանը իրեն պատկերացնում է Հայաստանում տեղահանված արցախցիների առաջնորդ: «Ժողովուրդ» օրաթերթի հետ զրույցում արցախյան պատգամավորները հայտնեցին, որ Բաբայանի առաջարկը մերժվել է արցախյան շատ պատգամավորների կողմից: «Ժողովուրդ» օրաթերթը տեղեկությունը ճշտելու համար կապ հաստատեց Արցախի Հանրապետության ՏԿԵ նախկին նախարար Հայկ Խանումյանի հետ, ով Սամվել Բաբայանի մտերիներից է. վերջինս նախ վրդովվեց մեր հնչեցրած հարցից, հետո վստահեցրեց՝ Սամվել Բաբայանի կողմից արված կոմիտե ստեղծելու առաջարկը կապ չունի ընտրությունների հետ, պարզապես տեղահանված արցախցիների խնդիրների լուծման նպատակով է առաջարկվել:



Նիկոլ Փաշինյանի իշխանությունը տառաջհորեն կրկնում է այն երեւույթը, ինչից ընդդիմադիր Փաշինյանը բողոքում էր՝ դիտարկելով հիմնական չարիք, այն է՝ ստուգումներ և սուգանքներ՝ ընդդիմադիր հայացքներ ունեցող անձանց բիզնեսում: «Պանտերա սեյուրիթի» ՍՊԸ ղեկավար Վահե Դարբինյանը համարձակություն ունեցավ իրապարակայնորեն պաշտպանել Բաբայան սրբազանին և ֆիզիկապես (ապահովելով անվտանգությունը) և գաղափարապես՝ քաջալերելով իշխանափոխությունը: Արդյունքում, «Պանտերա» պահույնային կազմակերպությունը ՊԵԿ-ը իրականացրել է չձեռնարկված աշխատողի հայտնաբերման ստուգում՝ դրա արդյունքում կազմելով 1.5 միլիոն դրամի ակն: Ռեպրեսիաներն էլ իր պրոպ-պրոպ չէ՛ն լինում... Գ.Գ. հավելենք, որ ՀՀ-ում նմանատիպ (պահույնային) գործունեություն իրականացնող մոտ 100 կազմակերպություններում վերջինս ստուգումը եղել է անհիշելի ժամանակներում:



ՄՇԱԿՈՒՅԹ

ԲԱՔԿԻ ՈՏՆՁԳՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

«ԶՈՐԱՅ ՔԱՐԵՐ»-Ը ՆԵՐԿԱՅԱՅՐԵԼ Է ՈՐՊԵՍ ԱՌԲԵՋԱՆԱԿԱՆ

Վերջին տարիներին եւ հասկալի վերջին ամիսներին Ադրբեջանը նուազապես արժանի է սկսել ՀՀ սուվերեն սարածքի նկատմամբ եւ սարբեր մշակութային միջոցառումների ընթացքում փորձում է «լեգիտիմացնել» սարածքային նկրտումները Հայաստանի նկատմամբ՝ նոր գործընթացներ սկսելով հայկական մշակութային ժառանգության յուրացման ուղղությամբ եւ քիմիափորձով նյութական եւ ոչ նյութական ժառանգությունը, դասնությունը, ինֆունությունը: Այս մասին գրել է Monument Watch-ը:



ՀՀ պատմական հուշարձանները ներկայացված են որպես «ադրբեջանական» հնագույն ժառանգություն: Արդեն իսկ ադրբեջանական հռչակված Սեւանի, Սյունիքի եւ Երեւանի կողքին, այս անգամ «Ադրբեջանի պատմական տարածքում գտնվող հուշարձան» է ներկայացվել Նաեւ Սիսիանի տարածաշրջանում գտնվող «Զորաց քարեր» պատմամշակութային հուշարձանը: Պետք է նշել, որ նման միջոցառումները ադրբեջանական հասարակության շրջանում եւ արտերկրում շարունակական բնույթ են կրում: Ավելի վաղ նման միջոցառում էր կազմակերպվել Նախիջևեանում հունիսի 21-ից 22-ը անցկացված ազգագրական փառատոն-համագումարի շրջանակներում եւ կրում էր «Վերադարձ դեպի Արեւմտյան Ադրբեջան» խորագիրը:

Հիշեցնենք, Նաեւ, որ Ադրբեջանի Հանրապետության իշխանությունները ջանք էն ինչպիսիք հայկական մշակույթը խեղաթյուրելու եւ պատմական արժեքները ոչնչացնելու համար: Պատերազմի ավարտից առ այսօր Արցախի տարածքում ոչնչացվել են գետնին եւ հավասարեցվել բազմաթիվ եկեղեցիներ, գերեզմանատներ, խաչքարեր եւ հուշարձաններ, իսկ մի մասն էլ, որոնց շուրջ աղմուկն ավելի բարձր է եղել ձեռախեղվել են կամ ներկայացվել, որպես այլաբանական մշակութային ժառանգություն: Դե իսկ մյուս կողմից ակտիվորեն քարոզչություն է տարվում Հայաստանի Հանրապետության տարածքում գտնվող հուշարձանների եւ պատմամշակութային կոթողների «ադրբեջանականացման» ուղղությամբ:

ՀՈՒՐԻ ԲԱՂՈՍԱՍՏԱՆՅԱԼ

ՄԱՐԶԱԿԱՆ

ԲԱՄԿԵՏԲՈՒԹՅԱՆ ՀԱՎԱՔԱԿԱՆՆԵՐ՝ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՄՐՑԱՇԱՐՈՒՄ

Հայաստանի բակետրոլի ֆեդերացիայից հայտնում են, որ օգոստոսի 26-ից սեպտեմբերի 1-ը Արու Դաբիում կանցկացվի միջազգային մրցաշար, որին կմասնակցի Նաեւ Հայաստանի ազգային հավաքականը: Բացի Հայաստանից՝ մրցաշարին կմասնակցեն Նաեւ Օմանի եւ Միացյալ Արաբական Էմիրությունների հավաքականները, ինչպես Նաեւ թիմեր ԱՄԷ-ից: Հայաստանի հավաքականը մրցաշարին կմասնակցի փորձնական կազմով: Գերագի Ղազանջյանի գլխավորությամբ Արու Դաբի են մեկնել հետևյալ խաղացողները՝ 1. Կարեն Մելիքյան 2. Յուրա Մելիքյան 3. Սամվել Գետրոյան 4. Տիգրան Մկրտումյան 5. Մարատ Միքայելյան 6. Արտյոմ Թավակալյան 7. Ալբերտ Թադևոսյան 8. Արայիկ Գետրոյան 9. Դանիել Կիրակոսյան 10. Ալեքսեյ Չիժմենկո 11. Սասուն Գուերբոյան Գերագի Ղազանջյանի օգնականը կլինի Արթուր Վաթյանը:

ՄՊԵՐՑՅԱՆԻՆ ՆՈՐ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ Է ԱՌԱՋԱՐԿՎԵԼ

Ռուսական «Կրասնոդարը» բարելավված պայմաններով երեք տարվա պայմանագիր է առաջարկել թիմի ավագ Էդուարդ Սպերդյանին, հայտնում է «ԲԵ Շոքոթ»-ը: Ադրբեջանի տեղեկություններով՝ «Կրասնոդարը» նոր պայմանագրի կնքման վերաբերյալ բանակցություններ է վարում 24-ամյա կիսապաշտպանի հետ: Ավելի վաղ Armenia Football-ը հայտնել էր, որ Սպերդյանը մինչև տրանսֆերային պատուհանի փակվելը ցանկանում է հեռանալ «Կրասնոդարից»: Ադրբեջանի տեղեկություններով՝ հայ ֆուտբոլիստն ակումբի ղեկավարությանը հայտնել է հեռանալու ցանկության մասին: Սպերդյանը «Կրասնոդարի» գլխավոր թիմում անցկացրել է 116 հանդիպում, դարձել 33 գոլի եւ 27 գոլային փոխանցման հեղինակ:

US Open

Կայացել է «Մեծ սաղավարտի» տարվա չորրորդ մրցաշարի US Open-ի կանանց մենախաղի վիճակահանությունը: Հայաստանը ներկայացնող թեմիստուհի Էլինա Ավանեսյանը (51-րդ ռակետ), մրցաշարի առաջին փուլում մրցելու է Բեատրիս Յադա Մայայի (Բրազիլիա, 23-րդ ռակետ) դեմ: Մրցախաղը Նախատեսված է այսօր՝ օգոստոսի 27-ին: 21-ամյա Ավանեսյանն այս տարվա օգոստոսից մրցաշարերում ներկայացնում է Հայաստանը: Նա US Open-ում լավագույն արդյունքը գրանցել է Նախորդ տարի, երբ դուրս է եկել երկրորդ փուլ, սակայն 3-6, 7-5, 5-7 հաշվով պարտվել է Ելենա Օստապենկոյին (Լատվիա, 10-րդ ռակետ):

Միջոցառումներ

«ՀԱՅՕՐՀՆԵՔ» ՓԱՌՏԱՑՈՆԸ՝ ՀԱՏԻՄԻ ԼԱՆՋԻՆ

Սեպտեմբերի 7-ին՝ ժ. 11:30-ից մինչև 22:00-ն, Կոտայքի մարզի «Ակունք» համայնքի Զովաշեն գյուղում՝ Հատիս լեռան լանջին, կկայանա հացահատիկի «Հացօրհնեք» փառատոնը, որը խոստանում է դառնալ ամենազանգվածային համահայկական տոնը եւ եկող տարվանից կրելու է միջազգային բնույթ: Փառատոնին կմասնակցեն 30-ից ավելի պարախմբեր տարբեր մարզերից, ինչպես Նաեւ «Ակունք» ազգագրական եւ «Բերդ» պարային անսամբլները, «Հայ մյուզիք բենդ»-ը, «Դոմիտլ» երգչախումբը, սիրված երգիչներ Վարդան Բաղայանը, Արսեն Գրիգորյանը՝ Մրոն, Դավիթ Ամալյանը, Լեյլա Սարիբեկյանը, Արսեն Համբարյանը, Սեդա Թեւանյանը, Սամվել Գալստյանը, Հրաչյա Սաֆարյանը, դուրսկահար Գետրո Դաբադյանը: Փառատոնի հատուկ հյուրն է «Արատ-բենդ»-ը ՌՌ Մոսկվայից:

Փառատոնի ընթացքում տաղավարներում կներկայացվեն հայ եւ այլ ազգությունների հացատեսակներ, ավանդական ուտեստներ, հուշանվերներ եւ այլն:

ԱՄՓՈՓՎԵԼ Է «ԱՄԱՌԸ ԳՐԱԳԱՐԱՆՆԵՐՈՒՄ» ԾՐԱԳԻՐԸ

Ամռան ամիսներին մարզերի մշակութային կյանքի ակտիվացման եւ երեխաների շրջանում ընթերցանության խրախուսման նպատակով ՀՀ մարզային գրադարաններում իրականացվում է «Ամառը գրադարաններում» ծրագիրը: Ծրագրի շրջանակում Օհան Չուբարյանի անվան Արարատի մարզային գրադարանում կազմակերպվել են մի շարք միջոցառումներ, այդ թվում՝ «Ամառը գրադարանում» կրթական եռամսյա ծրագիրը, որում ընդգրկված էին 7-9 տարեկան շուրջ 30 մանկահասակ ընթերցողներ: Ծրագրի նպատակն էր երեխաներին կապել ընթերցանությանը՝ այն դարձնելով հաճելի զբաղմունք, իսկ գրադարանը՝ մտավոր ժամանակի վայր: Ծրագրի շրջանակում անցկացվել են «Եղի՛ր օրինապահ», «Երգը՛ մեր առօրյան», «Ուլունքագործությունը՛ մանրուքների ստեղծագործական խաղ» խորագրով դաս-պարամունքները: Առաջին անգամ գրադարանում ստեղծված «Ամառը գրադարանում» թեմատիկ գրքային ֆոտոսուրբոն էլ ավելի է գրավել ընթերցողներին ոչ միայն ընթերցանության, այլև գրադարանը որպես հետաքրքիր ժամանակի վայր դիտարկելու համատեքստում: Գրադարանում առաջին անգամ գործարկվել է «Հանդիպում գրքի հետ» հարցաթերթիկը, որն առավել նպաստել է գրադարանավար-ընթերցող երկխոսության ամրապնդմանը, ինչպես Նաեւ օգնել ճիշտ կողմնորոշվել գրքի ընտրության հարցում: Ամռան ընթացքում կազմակերպված բազմաթիվ կրթական, մշակութային միջոցառումների արդյունքում Արարատի մարզային գրադարանում արձանագրվել է ընթերցողների եւ հաճախումների զգալի աճ՝ նոր ընթերցողների քանակը կազմել է 850, իսկ հաճախումների թիվը՝ 7048:


● Սեպտեմբերի 6-ին՝ ժամը 19:30-ին, Հ. Ղափլանյանի անվան դրամատիկական թատրոնում կցուցադրվի «Art փսիխոլոգ» ներկայացումը: Տոմսերի արժեքը՝ 2.000-8.000 դրամ:



ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ

ՀԱՐՑ. Խնդրում եմ ասել՝ որ դեղեկում գործատու իրավունք ունի իր նախաձեռնությամբ լուծել աշխատողի հետ կնքված աշխատանքային դաշմանագիրը:

Գրիշա Ահարոնյան (37 տարեկան)



ՊԱՏԱՍԽԱՆ. Քաղաքացու հարցին ի պատասխան՝ հայտնում ենք, որ գործատուն իրավունք ունի լուծել աշխատանքային դաշմանագիրը՝

1) կազմակերպության լուծարման (անհատ ձեռնարկատիրոջ գործունեության դադարման ու օրենքով նախատեսված դեպքերում պետական գրանցումն ուժը կորցրած կամ անվավեր ճանաչվելու) դեպքում,

2) արտադրության ծավալների եւ (կամ) տնտեսական եւ (կամ) տեխնոլոգիական ու (կամ) աշխատանքի կազմակերպման պայմանների փոփոխման եւ (կամ) արտադրական անհրաժեշտությամբ պայմանավորված՝ աշխատողների քանակի եւ (կամ) հաստիքների կրճատման դեպքում,

3) աշխատողի՝ զբաղեցրած պաշտոնին կամ կատարած աշխատանքին չհամապատասխանելու դեպքում,

4) աշխատողին նախկին աշխատանքում վերականգնելու դեպքում,

5) աշխատողի կողմից աշխատանքային պայմանագրով կամ ներքին կարգապահական կանոններով իրեն վերապահված պարտականությունները առանց հարգելի պատճառի պարբերաբար չկատարելու դեպքում,

6) աշխատողի նկատմամբ վստահությունը կորցնելու դեպքում,

7) աշխատողի երկարատե անաշխատունակության հետեւանքով (եթե աշխատողը ժամանակավոր անաշխատունակության պատճառով աշխատանքի չի ներկայացել ավելի քան 120 օր անընդմեջ կամ վերջին տասներկու ամսվա ընթացքում՝ ավելի քան 140 օր, եթե օրենքով եւ այլ նորմատիվ իրավական ակտերով սահմանված չէ, որ որոշակի հիվանդությունների դեպքում աշխատատեղը եւ պաշտոնը պահպանվում են ավելի երկար ժամանակով):

ՀՀ աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարություն

«ԺՈՂՎՈՒՐԳ». Գործատուի մոտ համապատասխան հնարավորությունների բացակայության դեպքում պայմանագիրը լուծվում է առանց աշխատողին այլ աշխատանք առաջարկելու:

ԿԱՐԳ

ՀԱՐՑ. Ես ուզում եմ իմանալ, թե ինչ է իրենից ներկայացնում ինճնական կառույցը:

Իրինա Մալխայան (39 տարեկան)



ՊԱՏԱՍԽԱՆ. Ի. Մալխայանի հարցին ի պատասխան՝ հայտնում ենք, որ ինքնակամ կառույց է համարվում օրենքով եւ այլ իրավական ակտերով սահմանված կարգով այդ նպատակի համար չհատկացված հողամասում կամ առանց թույլտվության կամ թույլտվությամբ սահմանված պայմանների կամ քաղաքաշինական նորմերի եւ կանոնների էական խախտումներով կառուցված կամ վերակառուցված շենքեր, շինություններ կամ այլ կառույցներ: (ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդված):

Կադաստրի կոմիտե

«ԺՈՂՎՈՒՐԳ». Ինքնակամ կառույցը կարող է քանդվել հողամասի սեփականատիրոջ կողմից: Ինքնակամ կառույցը պետության, համայնքի կամ այլ շահագրգիռ անձի հայցով, որի իրավունքները եւ օրենքով պահպանվող շահերը խախտվել են, ենթակա է քանդման, իսկ հողամասը՝ նախկին վիճակի վերականգնման՝ հողամասի սեփականատիրոջ հաշվին:

ՏԵՂԵԿԱՅՎԱԾ

ԼՈՒՐ ԿԱԴՐ

Լուսանկարը՝ համացանցից



«Գութան» Հայաստանի ազգային-ավանդական երգի-պարի ամենամյա փառատոնը, որն իրականացնում է «Մրրո» հայ ազգային արվեստի կենտրոնը, այս տարի տոնում է հրեյանական 10-ամյակը:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը
Բաժանորդագրվելու
համար կարող եք դիմել

«Հայմամուկ» ՓԲԸ
հեռ. 45-82-00, 45-19-11

«Հայկոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ. 52-5301

Առաքումը՝ ԱՆՎՃԱՐ:



Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (010 54-64-23 հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադարձնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

ԱՌԱՋԱՐԿ
հայկական տպագիր մամուլից


«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետևյալ բլանկը եւ ուղարկել նշված հասցեով: Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ _____
Ազգանուն՝ _____
Առաքման հասցե՝ _____
Բջջային եւ/կամ քաղաքային հեռախոս՝ _____

Հեռ.՝ (060) 490049
0023, Արշակունյաց 2, 5-րդ հարկ, 518ս.

ԵՂԱՆԱԿԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ



Շիրակ	+11 + 16 +28 + 33	Արարատ	+23 + 25 +38 + 39
Կոտայքի լեռներ	+10 + 16 +28 + 30	Արմավիր	+20 + 22 +37 + 38
Կոտայքի նախալեռներ	+20 + 23 +35 + 36	Վայոց ձորի լեռներ	+11 + 14 +29 + 31
Գեղարքունիք	+11 + 16 +25 + 28	Վայոց ձորի նախալեռներ	+21 + 23 +36 + 39
Լոռի	+14 + 18 +29 + 33	Սյունիքի հովիտներ	+21 + 24 +36 + 39
Տավուշ	+18 + 22 +31 + 36	Սյունիքի նախալեռներ	+14 + 17 +30 + 32
Արագածոտնի լեռներ	+11 + 14 +17 + 20	ԼՂՀ	+13 + 16 +29 + 32
Արագածոտնի նախալեռներ	+16 + 18 +28 + 31	Երեւան	+30 + 32 +36 + 38

Լրատվական գործունեություն իրականացնող՝ «Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ ք. Երեւան, Աբովյան 22^ա/3, հեռ.՝ 010 54-64-23
Պետական գրանցման վկայականի համարը՝ 03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության 26.8.2024

Գլխավոր խմբագիր՝
ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, Գ նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետևյալ նախադասությունը. «Շարունակությունը կարող էք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»: